## 48. Մեծ գավթի միջին նավի հս աե սյան կամարի վրա

(Լուս. № 43)

*ԺԳ դար*

Հրատարակված է՝ Ջալ 22—23, Վիմ 247

1 *Կամաւն Այ, ես՝ Վաչէ Ալվեցի միաբանեցա Ածածնիս, էտու*
2 *Ակն ի Ճարիապանս եւ այլ բազում արդիւնս։ Տր Յոհանէս եւ միաբանքս*
3 *էտուն ինձ զամէն եկեղեցիքս ի տաւնի Եսայի Մարգարէի։ Ով խափանէ մեղ-*
4 *ացն տէր է։*

Ծանոթություն.— *1. Վաչե Ալվեցու տապանաքարը նույնպես անթվական է և գտնվում է նույն գավթում (արձ. № 69)։*

*2. Ժամանակը որոշել ենք Հովհաննես առաջնորդների ժամանակով։*



*Նկ. 43. Արձ. №№ 48 և 49։*

*3. Երկրորդ տողում* ակն ի Ճարիապանս *պետք է հասկանալ* ջրաղացի մի ակը Ճարիապանում, *բայց* Ճարիապան *տեղանունը լավ չի կարդացվում Ճ գրին հաջորդող* ա *գրի վրա հյուսած փակագիրը չի հասկացվում։*

*4. Երրորդ տողում գեղջված է* ժամ *կամ* պատարագ *բառը։*

*5. Նույն տողում* խափանէ *բառից հետո պետք է ավելացնել* մեր, *որ տեղի նեղության պատճառով դարձյալ գեղջված է։*